Պետական աջակցություն սահմանամերձ համայնքներին

ՀՀ սահմանամերձ համայնքների բնակիչների առօրյա հոգսերը հնարավորինս մեղմելու և կենսապայմանները բարելավվելու նպատակով ընդունվել է ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշումը, որով սահմանվում է Հայաստանի Հանրապետության սահմանամերձ համայնքներին տրվող սոցիալական աջակցության փոխհատուցման ենթակա ծավալները, փոխհատուցման կարգն ու փոխհատուցում ստացող սահմանամերձ համայնքների ցանկը: Սույն որոշմամբ աջակցություն է տրամադրվում ՀՀ Արարատի (թվով 2), Գեղարքունիքի (թվով 3), Վայոց Ձորի (թվով 2), Սյունիքի (թվով 5), և Տավուշի (թվով 11) մարզերի 23 սահմանամերձ համայնքների 81 բնակավայրերի բնակիչներին բնական գազի, էլեկտրաէներգիայի, ոռոգման ջրի սակագնի մասնակի և անշարժ գույքի հարկի փոխհատուցման նպատակով:

Այդ թվում՝ *էլեկտրաէներգիա* սպառող բնակիչ-բաժանորդներից հաշվարկային տարում գումարային մինչև 1440 կՎտ/ժ էլեկտրաէներգիայի քանակությունների համար վճարումները գանձել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից հաստատված սակագնից նվազեցված գնով՝ 50 տոկոսի չափով: *Բնական գազ* սպառող բնակիչ-բաժանորդներից հաշվարկային տարում գումարային մինչև 360 խոր. մետր բնական գազի քանակությունների համար վճարումները գանձել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից հաստատված սակագնից նվազեցված գնով՝ 50 տոկոսի չափով: Ընդ որում «Գազպրոմ Արմենիա» փԲԸ-ի բաժանորդ չհանդիսացող, սակայն «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի բաժանորդ հանդիսացող բաժանորդների համար էլեկտրաէներգիայի ծախս ունեցող ամիսներին տրամադրվում է 15 խոր. մետր, տարվա ընթացքում աճողական մինչև 180 խոր. մետր բնական գազի քանակության արժեքին համապատասխան գումար: *Ոռոգման ջրի* համար սահմանաչափ չի սահմանվել: *Անշարժ գույքի հարկի* դեպքում՝ ՀՀ սահմանամերձ համայնքների բնակավայրերի վարչական տարածքում գտնվող, մարտական գործողությունների հետևանքով չօգտագործվող և հակառակորդի կողմից

հողատարածքների գնդակոծման դեպքեր ունեցող գյուղատնտեսական նշանակության և բնակավայրերի բնակելի կառուցապատման հողատարածքների և (կամ) դրանց բարելավումների անշարժ գույքի հարկի տարեկան գումարը հարկ վճարող ֆիզիկական և իրավաբանական անձանց անունից, Հայաստանի Հանրապետության կառավարությունը, նրանց փոխարեն համապատասխան համայնքի բյուջե վճարում է, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով այդ նպատակի համար նախատեսված գումարներից:

2021 թվականին փաստացի ծախսն ըստ մարզերի կազմել է ՀՀ Արարատի մարզ՝ 17631.21 հազ. դրամ, ՀՀ Գեղարքունիքի մարզ՝ 113034.42 հազ. դրամ, ՀՀ Սյունիքի մարզ՝ 168590.3 հազ. դրամ, ՀՀ Վայոց ձորի մարզ՝ 51755.1 հազ. դրամ, ՀՀ Տավուշի մարզ՝ 524767.9 հազ. դրամ, Ջրօգտագործող ընկերություններին՝ 51666.2 հազ. դրամ: Չօգտագործված գումարը՝ 227760.6 հազ. դրամ, վերադարձվել է ՀՀ պետական բյուջե:

Միաժամանակ նշենք, որ յուրաքանչյուր տեսակի գծով տրամադրվող պետական աջակցություն ստացող շահառուների քանակը 2022 թվականի համար կազմում է.

անշարժ գույքի հարկի գծով՝ շուրջ 54298 ֆիզիկական և իրավաբանական անձ,
էլեկտրաէներգիայի սակագնի գծով՝ շուրջ 26303 բնակիչ- բաժանորդ,
բնական գազի սակագնի գծով՝ շուրջ 13335 բնակիչ- բաժանորդ,
ոռոգման ջրի սակագնի գծով՝շուրջ 4022 ֆիզիկական և իրավաբանական անձ: